ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «Լույսեր» ՓԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2022թ. - ի երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «Լույսեր» ՓԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2022թ. - ի երրորդ եռամսյակի զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը, որոնց հետ առնչվում է «Լույսեր» ՓԲԸ-ն:

Գրիգոր Չիչոյան	Գործադիր Տնօրեն		01/12/2022
Արամ Տիտանյան	Գլխավոր Հաշվապահ		01/12/2022

«Լույսեր»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆ, Երրորդ Եռամսյակ

«Լույսեր» ՓԲԸ

2022թ. 3-րդ եռամսյակային հաշվետվություն

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է ակտիվ գործունեություն, շարունակվել են շինարարական աշխատանքները, բնակարանների և ավտոկայանատեղիների վաճառքը և հաճախորդների որակյալ սպասարկումը: Հիմնվելով ընկերության ցուցաբերած արդյունքների վրա՝ կայացվել են հեռանկարային զարգացման որոշումներ՝ ընկերության գործունեության ընդլայնման, նոր նախագծերի մշակման ուղղությամբ:

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (30.09.2022թ.) «Լույսեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) **ակտիվները** կազմել են 17.21 մլրդ ՀՀ դրամ, նախորդ հաշվետու ժամանակաշրջանից գրանցելով աճ: Այս բարձրացումը պայմանավորված է կառուցապատողի հատուկ հաշվի աճի հետ՝ նախորդ կիսամյակի հետ համեմատելով: Այսպիսով, ընկերության ակտիվների գերակշիռ մասը բաժին է ընկնում հաճախորդներից ստացված մուտքերին և պաշարներին, որոնք 30.09.2022թ. վերջի դրությամբ միասին կազմել են ակտիվների 84.30 %-ը:

Ընկերության **դրամական միջոցները** (բանկային հաշիվների տնօրինման համար ազատ մնացորդներ) երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել են 195.30 մլն ՀՀ դրամ:

Ակտիվների աճին զուգընթաց կիսամյակի ընթացքում Ընկերության **պարտավորությունները նույնպես աճ են գրանցել**՝ 30.09.2022թ. կազմելով 16.05 մլրդ ՀՀ դրամ:
Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է գնորդներից ընթացիկ կանխավճարների աճի հետ:
Ինչպես ակտիվները և պարտավորությունները, **սեփական կապիտալը** նույնպես որոշակի աճ է գրանցել՝ 30.09.2022թ. դրությամբ կազմելով 1.17 մլրդ ՀՀ դրամ:

Դրամական Հոսքեր

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դրամական հոսքերում նկատվել են որոշակի դրական փոփոխություններ:

Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքերը եռամսյակի ընթացքում կազմել են 1,397 մլրդ ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ զգալի մաս են կազմել հաճախորդներից ստացված մուտքերը՝ կազմելով 2.33 մլրդ ՀՀ դրամ:

Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքերը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կազմել են մինուս 1.07 մլրդ ՀՀ դրամ՝ հիմնականում պայմանավորված փոխառության և վարկի մարմամբ:

Ներդրումային գործունեության հոսքերը կազմում է 112.31 մլն ՀՀ դրամ՝ պայմանավորված միջոցների կառուցապատողի հատուկ հաշվում սառեցման և դրանցից ստացված տոկոսի հետ:

Եռամսյակի ընթացքում դրամական միջոցների մնացորդը աճել է՝ սեպտեմբերի 30-ի դրությամբ գրանցելով մոտ 500 մլն աճ, կազմելով մոտ 7.21 մլրդ դրամ:

Հետագա զարգացման նկարագիր

Առաջիկա տարիներին «Լույսեր» ՓԲԸ-ի հիմնական առաքելությունն է «Լույսեր» բնակելի համալիրի բարեհաջող ավարտը և հանձնումը, հաճախորդների, մատակարարների և այլ շահագրգիռ անձանց նկատմամբ պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարումը և որակյալ ծառայությունների մատուցումը:

Ընկերությունը մշտապես ուսումնասիրում է շուկան, սպառողների կարիքները և պահանջները՝ հետագա նախագծերի մշակման նպատակով: Այսպես, «Լույսեր» բնակելի նախագծից բացի, Ընկերությունը նախատեսում է իրագործել «Լույսեր» բազմաֆունկցիոնալ կոմերցիոն նախագիծը, որը մոտ 20 հազար քմ. ընդհանուր տարածքով շինություն է՝ ապահովված տարբեր ենթակառուցվածքներով: